

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՎԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ  
«ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ» (1972—1982 թթ.)

Կ. Ռ. ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

1970-ական թթ. սկզբներին ԱՄՆ-ի ներքին կյանքի առանձնահատուկ գծերից մեկը էթնիկական փոքրամասնությունների պայքարն էր երկրի քաղաքական կյանքում իրանց դերի ու ազդեցության մեծացման համար<sup>1</sup>։ Քաղաքացիական իրավունքների մասին օրենքների ընդունումը, սոցիալական խնդիրների լուծման գործում պետության պատասխանատվության ընդլայնումը, ազգային հարաբերությունների բնագավառում պետական կարգավորման ֆունկցիաներ իրականացնող դաշնակցային մարմինների ստեղծումը նոր հնարավորություններ ընձեռեցին էթնիկ փոքրամասնությունների քաղաքական ակտիվության համար։ Էթնիկական կազմակերպությունները և նրանց ղեկավարները սկսեցին ճնշում գործադրել կառավարական գերատեսչությունների և օրենսդիր մարմինների վրա՝ պահանջելով ճանաչել իրենց առջև ծառայած առանձնահատուկ խնդիրների գոյությունը և օրենսդրական միջոցներ ձեռնարկել իրենց ազգային շահերը պաշտպանելու համար<sup>2</sup>։

Վերոնշյալ միտումներն ամբողջությամբ վերաբերում են նաև հայ համայնքի հասարակական-քաղաքական գործունեությանը։ Ազգային ինքնագիտակցության աճը և դրա հետ սերտորեն կապված էթնիկական համախմբման միտումը էականորեն ընդլայնեցին հայ համայնքի կողմից քաղաքական ներուժի օգտագործման հնարավորությունները, և արդեն 70-ական թթ. սկզբներին ամերիկահայ համայնքի տարբեր գործիչներ սկսեցին խոսել հայ համայնքը ճանաչված և ազդեցիկ հասարակական-քաղաքական ուժ դարձնելու անհրաժեշտության մասին<sup>3</sup>։

Ամերիկահայ համայնքի այդ իղձերը կոչված էր իրագործելու 1972 թ. ստեղծված Ամերիկայի Հայկական համագումար կազմակերպությունը։ Դաշնակցային մակարդակում այն գրանցված է իբրև կրթական և մշակութային հիմնադրամ, որի պաշտոնական նպատակն է նպաստել ԱՄՆ-ում հայ մշակույթի պահպանմանն ու տարածմանը և ամերիկահայերի կրթությանը։ Սակայն իրականում կազմակերպության գործունեությունը կառուցված է այնպես, որ նրա կողմից ֆինանսավորվող ծրագրերը կողմնորոշված են դեպի ավելի ընդարձակ նպատակների ու խնդիրների իրականացումը։

1. ԱՄՆ-ի հասարակական կարծիքի ձևավորումը, օրենսդիր և գործադիր իշխանությունների վրա ազդեցության բանեցումը՝ ամերիկյան հասարակու-

<sup>1</sup> Տե՛ս «Национальные процессы в США», М., 1973:

<sup>2</sup> Տե՛ս И. А. Геевский, С. А. Червоная. Национальный вопрос в общественно-политической жизни, США, М., 1985:

<sup>3</sup> Տե՛ս Լ. Մարտիրոսյան, Ամերիկահայությունը երեկ և այսօր, Պելրութ, 1973, Խ. Քեյնսլան, Սփյուրի մեջ, Փարիզ, 1980:

թյան, օրենսդիր և գործադիր իշխանությունների կողմից 1915 թ. Հայոց ցեղասպանության փաստը ճանաչելու նպատակով:

2. Ամերիկահայերի ներգրավումը ԱՄՆ-ի քաղաքական համակարգում՝ երկրի քաղաքական կյանքում հայերի դերի բարձրացմանը նպաստելու համար:

Այս նպատակներին համապատասխան, Հայկական Համագումարն իրականացնում է մի շարք ծրագրեր, որոնցից մասնաառաջնայինն ու հիմնականը «կառավարական ծրագիրն» է: Կազմակերպության կողմից իրականացվող մյուս ծրագրերը՝ «հասարակական», «գիտահետազոտական» և «ուսանողական», փաստորեն կամ կազմում են նրա քաղաքական գործունեության բաղկացուցիչ մասը, կամ այդ ծրագրի ածանցյալներն են:

Կազմակերպության «կառավարական ծրագիրը» նպատակ ունի նպաստել ամերիկահայության մասնակցությանը կառավարման գործընթացներին դաշնակցային և նահանգային մակարդակներում, ինչպես նաև՝ ամերիկահայերի շահերի պաշտպանությանը իշխանության օրենսդիր և գործադիր մարմիններում: Այդ նպատակով կազմակերպությունը հետևում է Կոնգրեսի և Սպիտակ տան գործունեությանը՝ հավաքելով և տարածելով անհրաժեշտ տեղեկություններ: Այդ գործունեության իրականացման համար կատարվում են հսկայական հետազոտական աշխատանքներ, հավաքվում են տարբեր բնույթի տեղեկատվական նյութեր, կազմվում են անհրաժեշտ փաստաթղթեր: Պարունակվող տեղեկատվությանը համապատասխան՝ այդ նյութերն ու փաստաթղթերը ուղարկվում են ԱՄՆ-ի Կոնգրես, Սպիտակ տուն, պետական դեպարտամենտ, ինչպես նաև տրամադրվում են առանձին կոնգրեսմենների և բարձրաստիճան պաշտոնյաների: Այդպիսով, դրանք օգտագործվում են իբրև ԱՄՆ-ի պաշտոնական շրջանակների դիրքորոշման վրա ներգործելու միջոց ամերիկահայերին հետաքրքրող հարցերի քննարկման ժամանակ:

Ակնհայտ է, որ նման բնույթի գիտատեղեկատվական նյութերով ԱՄՆ-ի օրենսդիր և գործադիր իշխանությունների ապահովումը վկայում է կազմակերպության լոբբիստական գործունեության մասին: Այդ նպատակով նրա կառուցվածքում ստեղծված է հատուկ մարմին՝ «Քաղաքական գործողությունների կոմիտե»: Անմիջական կառավարական լոբբիզմն իրականացնում են հենց կազմակերպության անդամները, որոնց սոցիալ-տնտեսական բարձր կարգավիճակը նրանց հնարավորություն է տալիս անձնական կապեր հաստատել կոնգրեսմենների, սենատորների և բարձրաստիճան այլ պաշտոնյաների հետ, կազմակերպել հանդիպումներ ու ճաշկերույթներ, նրանց խոստանալ հայ ընտրողների ձայները, մի խոսքով՝ ներգործել ԱՄՆ-ի օրենսդիր և գործադիր իշխանությունների վրա: Այսպես, կազմակերպությունը մշտապես ունենում է «յուրային» կոնգրեսմեններ և սենատորներ, որոնք կազմակերպության անդամների ներգործության տակ քվեարկում են այս կամ այն հայանպաստ որոշման օգտին: Նրանց ճնշող մեծամասնությունը դեմոկրատական կուսակցության անդամներ են:

Հայկական Համագումարն իր պրակտիկ գործունեության մեջ ձգտում է հենվել նաև ամերիկահայերի զանգվածային քաղաքական ակտիվության վրա և կոորդինացնում է այդ ուղղությամբ տարվող հայկական մյուս կազմակերպությունների աշխատանքները: Զանգվածային ակտիվության դրսևորման այդպիսի ձևերից է Կոնգրեսի հասցեով նամակների հոսքի ու հեռախոսազանգերի, ինչպես նաև բարձրաստիճան պաշտոնյաների հետ անմիջական հանդիպումների կազմակերպումը:

Ամերիկյան քաղաքական համակարգում ամերիկահայության մասնակցությունը խրախուսելու նպատակով ԱՀՀ-ն հրատարակել է «Ամերիկահայու-

Բյան մասնակցությունը ժողովրդավարական գործընթացներին» հետազոտա-  
 կան ձեռնարկը, որը բացահայտում է կազմակերպության բուն գործունեու-  
 թյան մարտավարությունը, ամերիկյան հասարակության մեջ հայ համայնքի  
 ինտեգրացման արդյունավետ միջոցները: Ձեռնարկը ամերիկահայերին խոր-  
 հուրդ է տալիս շնորհանալ ներքին համայնքային կյանքից, այլ միայն «ընդ-  
 լայնել իրենց հետաքրքրությունների շրջանակը՝ ներառելով երկրի ամբողջ  
 քաղաքական համակարգը»<sup>4</sup>: Ընդ որում, մասնակցությունը ամերիկյան քա-  
 ղաքական գործընթացներին դիտվում է իբրև ամերիկահայերի շահերի «ա-  
 ռաջխաղացման և պաշտպանության ռազմավարություն»<sup>5</sup>: Պարզաբանելով  
 այդ ռազմավարության իրագործման ուղիները՝ ձեռնարկը նշում է ամերիկ-  
 յան քաղաքական կյանքում հայերի ներգրավման գործընթացի երեք հաջոր-  
 կական փուլեր: Առաջին փուլն ընդգրկում է բողոքի ցույցերի ու մարդաշատ  
 ժողովների կազմակերպումը, որոնց ընթացքում քաղաքականապես ակտիվ  
 ամերիկահայերը փորձում են ամերիկյան հասարակության ուշադրությունը  
 բեռնել իրենց հետաքրքրող խնդիրների վրա: Այս փուլն անշափ կարևոր է  
 ամերիկահայերի քաղաքական ինքնագիտակցությունը բարձրացնելու տեսա-  
 կետից և առավելապես բնորոշ է հայ քաղաքական կուսակցությունների գոր-  
 ծելակերպին: Սակայն, բողոքի ցույցերն ու ժողովները բավարար չեն ամե-  
 րիկահայ համայնքի նպատակներին հասնելու համար: Գործընթացի երկրորդ  
 փուլում նախատեսվում է զանգվածային գործողություններից ուշադրությունը  
 կենտրոնացնել առանձնահատուկ ձեռնարկումների վրա: Խրախուսվում է դաշ-  
 նակցային, նահանգային և տեղական իշխանության մարմինների ներկայա-  
 ցուցիչների հետ հաստատուն և ամուր կապերի պահպանումը: «Շայերը,—  
 ասվում է ձեռնարկում,— չպետք է պաշտոնյաներից հրաշքներ ակնկալեն  
 ամեն անգամ, երբ մոտենում է ապրիլի 24-ը: Անհրաժեշտ է պահպանել անձ-  
 նական և շարունակական շփումներ: Մենք պետք է գիտակցենք, որ նախա-  
 ճաշի ընթացքում ասված բարեհաճ խոսքը, վերջ ի վերջո, ավելի համոզիչ  
 կարող է լինել, քան փողոցներում ցույցերի անցկացումը: Ավելի լավ է լինել  
 հզոր համակարգի մի մասնիկը, քան մի կողմնակի անձ, քանի որ ձեր իդ-  
 ձերը շատ ավելի հեշտ կիրականանան այն դեպքում, երբ դուք որոշ կարո-  
 ղություններ ունենաք կառավարական մեխանիզմի ներսում, քան եթե դուք  
 միայն դրսում կանգնած խնդրարկու լինեք»<sup>6</sup>: Իբրև այդ գործընթացի վերջ-  
 նական փուլ է դիտվում ԱՄՆ-ի հայաշատ բոլոր վայրերում հայ քաղաքական  
 գրասենյակների (հիմնարկների) ստեղծումը, որոնց անձնակազմը պետք է  
 համալրված լինի ձեռնհաս հայ մասնագետներով: Այդ գրասենյակների (հիմ-  
 նարկների) հիմնական խնդիրն է լինելու ամերիկահայության շահերի ներ-  
 կայացումը ԱՄՆ-ի օրենսդիր և գործադիր մարմիններում և այդ նպատակով  
 նրանց համապատասխան տեղեկատվությամբ ապահովումը: «Նրանք, ովքեր  
 կարողացել են տեղեկատվություն մատակարարել վստահելի հիմքի վրա,—  
 ասվում է ձեռնարկում,— արդեն կատարել են առաջին քայլը ազդեցություն  
 և հզորություն ձեռք բերելու ուղղությամբ»<sup>7</sup>:

Ի տարբերություն հայ ավանդական քաղաքական կուսակցությունների,  
 Հայկական Համագումարի «կառավարական ծրագիրը» նպատակ ունի պաշտ-  
 պանելու ամերիկահայերի շահերը ոչ թե ամերիկյան քաղաքական համակար-  
 գից դուրս, այլ հենց դրա շրջանակներում՝ օգտագործելով ամերիկյան ժողո-

<sup>4</sup> «The Armenian Reporter», 1977, May 5.

<sup>5</sup> Նույն տեղում:

<sup>6</sup> Նույն տեղում, June 16:

<sup>7</sup> Նույն տեղում, May 5.

վրրդավարութեան ընձեռած հնարավորութիւնները: Այլ կերպ ասած, այն նըպաստում է ամերիկեան հասարակութեան մեջ հայ համայնքի ինտեգրացման գործընթացին՝ հայ ազգային արժեքները պահպանելու պայմանով:

Ամերիկեան քաղաքական կյանքում հայերի մասնակցութիւնը բարձրացնելու, այդ ուղղութեամբ ԱՀՀ-ի ձեռնարկած քայլերը քննարկելու նպատակով 1978 թ. ընթացքում կազմակերպութիւնը հրավիրեց նաև մի շարք տարածաշրջանային համաժողովներ ԱՄՆ-ի տարբեր վայրերում (Վաշինգտոնում, Լոս Անջելեսում, Վալթհամում, Դետրոյտում, Նյու Յորքում և այլուր): Այդ համաժողովներին մասնակցում էին ոչ միայն Հայկական Համագումարի անդամները, այլև ամերիկահայ հասարակական երեւի գործիչներ, հայ և օտարազգի բարձրաստիճան պաշտոնյաներ, քաղաքագետներ, ձեռներեցներ, ուսանողներ: Ժողովականները կարծիքներ էին փոխանակում ամերիկահայ համայնքը նշանակալից և ազդեցիկ քաղաքական ուժ դարձնելու միջոցների վերաբերյալ և դրա ամենարդիւնավետ միջոցը համարում էին հայերի ակտիվ ներգրավումը ԱՄՆ-ի քաղաքական համակարգում: Անհրաժեշտ էր համարվում հայ թեկնածուների առաջադրումը ընտրովի պաշտոններում և ընդգծվում էր այդ գործում ամբողջ համայնքի աջակցութեան ապահովման կարեւորութիւնը: Մասնավորապէս որոշվեց համախմբել ամերիկահայ համայնքի ջանքերը՝ հայ թեկնածուների հաղթանակը ընտրութիւններում ապահովելու նպատակով: Այդ ընթացքում միաժամանակ շորս հայեր իրենց թեկնածութիւնն էին առաջադրել տարբեր ընտրովի պաշտոնների համար: Այսպես, Կալիֆորնիայի նահանգային ժողովի սենատոր Զորջ Թոքմեջյանը իր թեկնածութիւնն էր առաջադրել Կալիֆորնիայի գլխավոր դատախազի պաշտոնի, Չարլզ (Զիպ) Փաշայանը և Դենիս Կազարյանը՝ ԱՄՆ-ի Կոնգրեսում ընտրվելու, իսկ Զեյ Մարկոսյանը՝ Կալիֆորնիայի պետական քարտուղարի պաշտոնի համար: Չնայած այս շորս թեկնածուներից միայն առաջին երկուսը հասան հաջողութեան, բայցեայնպէս ինքնին այն փաստը, որ բնակչութեան թվով ամենամեծ նահանգի՝ Կալիֆորնիայի գլխավոր դատախազ (հետագայում նահանգապետ) է ընտրվել հայազգի Զ. Թոքմեջյանը, իսկ ԱՄՆ-ի Կոնգրեսի անդամ՝ Չ. Փաշայանը, վկայում էր ամերիկահայութեան քաղաքական ինքնագիտակցութեան և ամերիկեան քաղաքական կյանքում նրանց ինտեգրացման բարձր աստիճանի մասին: ԱՄՆ-ի իշխանութիւնների կողմից երկրի հասարակական-քաղաքական կյանքի այլազան ասպարեզներում ամերիկահայութեան կատարած նըշանակալից ներդրման ճանաչման մասին է վկայում նաև 1979 թ. հայազգի Սեթ Մոմջյանի՝ դեմոկրատական կուսակցութեան համաամերիկեան խորհրդի նախագահ նշանակվելու փաստը:

Ամերիկայի Հայկական համագումարի գործունեութեան հիմնական մասը կազմել են այն հարցերը, որոնք անմիջականորեն վերաբերում էին 1915 թ. Հայոց ցեղասպանութեան փաստի ճանաչմանը, Թուրքիայում հայերի նկատմամբ կիրառվող ճնշումների քաղաքականութեանը, ինչպէս նաև կիբանանի և Կիպրոսի հայութեան վիճակին և այլն:

Կազմակերպութեան գործունեութեան ակտիվացմանը նպաստեցին արտաքին քաղաքական այնպիսի գործոններ, ինչպիսիք էին Հայերի ցեղասպանութեան վերաբերյալ ՄԱԿ-ում ընթացող քննարկումները և Թուրքիայի՝ հայերի նկատմամբ իրականացվող ճնշումների քաղաքականութիւնը:

1973 թ. Ժնևում տեղի ունեցած ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի Ազգային փոքրամասնութիւնների նկատմամբ խտրականութեան

<sup>8</sup> Տե՛ս նույն տեղը. 1978, October 19:

<sup>9</sup> Տե՛ս «The Armenian Weekly», 1979, July 28:

կանխման և պաշտպանության ենթահանձնաժողովի 26-րդ նստաշրջանը միաձայն ընդունեց Ռուանդայի ներկայացուցիչ Ն. Ռուխաշիանկիոյի զեկուցման առաջին բաժինը՝ ցեղասպանությունը կանխելու և դրա համար պատժելու հարցի շուրջ: Զեկուցման 30-րդ հոդվածում մասնավորապես ասվում էր. «Անցնելով արդի փուլին՝ կարելի է նշել հայերի կոտորածը ապացուցող բավականաչափ առատ վավերագրերի առկայությունը, որը նկատվում է իբրև «քրսաներորդ դարի առաջին ցեղասպանությունը»<sup>10</sup>: Նույն զեկուցումը քննարկվեց մեկ տարի անց՝ այս անգամ արդեն Մարդու իրավունքների հանձնաժողովում: Սակայն Թուրքիայի ճնշման տակ զեկուցումը վերադարձվեց հեղինակին՝ վերամշակման: ԱՄՆ-ի ներկայացուցիչ Ֆ. Հոֆմանը համաձայնեց Թուրքիայի ներկայացուցչի պահանջին՝ դրանով իսկ ժխտելով հայերի ցեղասպանության փաստը: ԱՄՆ-ի դիրքորոշումը այս հարցում արդարացիորեն առաջացրեց հայ համայնքի դժգոհությունը, և հայկական կազմակերպությունները փորձում էին իրենց բողոքի ձայնը բարձրացնել ԱՄՆ-ի վարչակազմի այդ դիրքորոշման դեմ:

ՄԱԿ-ում Հայոց ցեղասպանության հարցն արժարժելու, ամերիկյան հասարակության ու կառավարության, ինչպես նաև միջազգային հանրության ուշադրությունը Թուրքիայում հայերի նկատմամբ կիրառվող ճնշումների փաստի վրա բեկեղելու նպատակով կազմակերպության ղեկավարները ակտիվ դործունեություն ծավալեցին՝ հավաքելով ու տարածելով համապատասխան բրնույթի տեղեկատվություն և կազմակերպելով բազմաթիվ հանդիպումներ տարբեր մակարդակներով: Մասնավորապես, այդպիսի հանդիպումներ կազմակերպվեցին ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովում հավատարմագրված մի շարք երկրների դիվանագիտական ներկայացուցիչների հետ՝ ներանց տրամադրելով մեծաքանակ նյութեր Հայոց ցեղասպանության վերաբերյալ<sup>11</sup>:

1974 թ. հունվարի 6-ին Հայկական Համագումարի Ղեկավար կոմիտեն հրապարակեց մի հայտարարություն, որում իր խոր անհանգստությունն էր հայտնում Թուրքիայում հայերի նկատմամբ կիրառվող ճնշումների առնչությամբ: «Միացյալ Նահանգների հայկական համայնքը, — ասվում էր հայտարարության մեջ, — չի կարող պիտորդի դերում մնալ այն ժամանակ, երբ հայերը կամ հայկական հաստատությունները կանխամտածված ճնշումների թիրախ են դարձել, և երբ նման քաղաքականությունը ծանր ու վնասակար ներգործություն է ունենում հայ մշակութային արժեքների պահպանման վրա»<sup>12</sup>:

Վերոհիշյալ հարցերը քննության առնվեցին նույն թվականի ապրիլին ԱՀՀ-ի կազմակերպած հանդիպման ժամանակ, որին մասնակցում էին ԱՄՆ-ի հայկական ազդեցիկ կազմակերպությունների ներկայացուցիչները: Հանդիպման ընթացքում որոշվեց, որ այդ ուղղությամբ հայկական բոլոր կազմակերպությունների աշխատանքները պետք է կոորդինացնի Հայկական Համագումարը<sup>13</sup>: Նշված խնդիրները քննարկվեցին նաև 1974 թ. ԱՄՆ-ի տարբեր վայրերում (Ռիբորնում, Վալթհամում, Սադլ-Քրուկում և Ուորենթոնում) տեղի ունեցած ԱՀՀ-ի համաժողովներում, որոնց մասնակիցները նախանշում և կոնկրետացնում էին այդ ուղղությամբ կազմակերպության կատարելիք գործողությունները: Մասնավորապես որոշվեց «համախմբել հայկական կազմակերպությունների ջանքերը» և «ապահովել համանման շահեր ունեցող էթնի-

<sup>10</sup> «The Armenian Reporter», 1973, August 23.

<sup>11</sup> Տե՛ս «The Armenian Weekly», 1974, September 5:

<sup>12</sup> Նույն տեղում, January 31:

<sup>13</sup> Տե՛ս «The Armenian Observer», 1974, May 1:

կական մյուս փոքրամասնությունների աջակցությունը»<sup>14</sup>։ Սերտ կապեր էին հաստատվում հունական համայնքի հասարակական-քաղաքական կազմակերպությունների, հատկապես Ամերիկյան հունական ինստիտուտի հետ։

1974 թ. պրիլի 24-ին կոնգրեսմեն Զ. Դանիելսոնը ԱՄՆ-ի Կոնգրեսում հանդես եկավ ճառով, որի ընթացքում ներկայացրեց Ամերիկայի Հայ Դատի հանձնախմբի և Հայկական իրավունքների միության բողոքագրերը։ Հայ Դատի հանձնախմբի նախագահ Ա. Բաղյանի նամակը ամբողջությամբ նվիրված էր ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի գեկուցումից Հայոց ցեղասպանության վերաբերյալ կետի ջնջմանը։ Նամակում դժգոհություն էր հայտնվում պատմական փաստերը խեղաթյուրելու Թուրքիայի փորձերին ԱՄՆ-ի պաշտպանության կապակցությամբ։ Հայկական իրավունքների միության բողոքագրում մասնավորապես նշվում էր, որ 300 մլն. դոլարի հասնող ԱՄՆ-ի ֆինանսական օգնությունը Թուրքիային շարունակվում է այն դեպքում, երբ Թուրքիայի հայերը «զրկված են իրենց անշարժ գույքը տնօրինելու, իրենց ընտրությունները եկեղեցիներ ու դպրոցներ կառուցելու ու ղեկավարելու և բոլոր ազատ մարդկանց իրավունք վերապահված այլ գործունեությունը մասնակցելու հնարավորությունից»<sup>15</sup>։ Կոնգրեսմեն Դանիելսոնը նաև պաշտոնական հարցում ուղղեց Միացյալ Նահանգների պետական դեպարտամենտին նշված խնդրի առնչությամբ։ Պատասխանելով Ա. Բաղյանի հարցապնդումներին՝ պետդեպարտամենտի խոսնակը արդարացնում էր ԱՄՆ-ի բացասական դիրքորոշումը Հայոց ցեղասպանության ճանաչման հարցում, նշելով, թե «պատմական աղբյուրները օգտագործելիս անհրաժեշտ է հավասարակշռված մոտեցում ցուցաբերել»<sup>16</sup>։ Պատասխանում նաև նշվում էր, թե պետդեպարտամենտին հայտնի չէ Թուրքիայում հայերի նկատմամբ որևէ հալածանքի դեպք, և որ «հայկական ծագում ունեցող Թուրքական քաղաքացիները ոչ մի սահմանափակման չեն ենթարկվում՝ կապված իրենց անշարժ սեփականության տնօրինման հետ»<sup>17</sup>։ Պետական դեպարտամենտի պաշտոնական տեսակետը այս խնդրի առնչությամբ շփոխվեց նաև հետագա տարիներին։ Այսպես, 1978 թ. պետդեպարտամենտի հրապարակած տարբեր երկրներում մարդու իրավունքների մասին հատուկ գեկուցման մեջ նշվում էր, թե «Թուրքիայում հարգվում են մտքի, կրոնի և ժողովների ազատությունը»<sup>18</sup>։ Մինչդեռ իրականությունը բոլորովին այլ էր. 1978 թ. Թուրքիայի հայոց պատրիարք Շնորք արքեպ. Գալստյանը հայ մամուլի համար նախատեսված իր տարեկան հաշվետվության մեջ նշում էր, որ շնայած Թուրքական կառավարության շոյլ խոստումներին, Թուրքիայի հայերը «զրկված են նոր շենքեր կառուցելու կամ հները վերանորոգելու, իրենց ավանդույթներին համապատասխան սեփական հաստատությունները կառավարելու իրավունքից»<sup>19</sup>։

Չնայած ԱՄՆ-ի վարչակազմի խիստ մերժողական դիրքորոշմանը հայկական արդարացի պահանջների նկատմամբ, Հայկական Համագումարի և ամերիկահայ մյուս կազմակերպությունների գործիչները շարունակում էին իրենց ջանքերը Հայոց ցեղասպանության փաստը ՄԱԿ-ի փաստաթղթերում հիշատակելու և ամերիկյան կառավարության ուշադրությունը Թուրքիայի հայերի իրավունքների ոտնահարման փաստի վրա բևեռելու ուղղությամբ։ 1978—1979 թթ. ակտիվ արշավ կազմակերպվեց Հայոց ցեղասպանությունը հիշա-

<sup>14</sup> «The Armenian Weekly», 1974, August 15.

<sup>15</sup> «The Armenian Observer», 1974, May 8.

<sup>16</sup> *Նույն տեղում*, June 5.

<sup>17</sup> «The Armenian Observer», 1974, June 5.

<sup>18</sup> «The Armenian Reporter», 1978, February 16.

<sup>19</sup> «The Armenian Review», May, 1979, vol. XXXII, p. 90.

տակող կետը ՄԱԿ-ի ցեղասպանության մասին զեկուցագրում մտցնելու նը-  
պատակով: Հայկական կազմակերպությունները հատուկ հուշագիր ներկայաց-  
րին ՄԱԿ-ի 12 երկրների պատվիրակություններին, հեռագրեր և նամակներ  
հղեցին փոխնախագահի և պետքարտուղարի հասցեով: Այդ համընդհանուր  
ջանքերի արդյունքում 1979 թ. մարտին ժնևում կայացած ՄԱԿ-ի մարդու  
իրավունքների հանձնաժողովի հերթական նստաշրջանը ձայների մեծամաս-  
նությամբ Հայոց ցեղասպանությունը հիշատակող հողվածը մտցրեց Ցեղա-  
սպանության մասին զեկուցման տեքստի մեջ<sup>20</sup>: Ի դեպ) Քուրբիան հանձնա-  
ժողովի անդամ չէր, և բացառությամբ Պակիստանի՝ հանձնաժողովի բոլոր  
անդամ երկրները, այդ թվում նաև ԱՄՆ-ը, քվեարկեցին այդ որոշման օգ-  
տին: Այս հարցում Միացյալ Նահանգների դիրքորոշման փոփոխման գործում  
գուցե ոչ երկրորդական նշանակություն ունեցավ այն հանգամանքը, որ ԱՄՆ-ի  
պատվիրակության անդամ էր հայ համայնքի սկանավոր գործիչ, հետագա-  
յում ԱՀՀ-ի Ցեղասպանության հարցերի կոմիտեի նախագահ Սեթ Մոմջյանը:

Քուրբիայի հայության իրավունքների պաշտպանության հարցի հետա-  
պնդմանը նոր լիցք հաղորդեց 1980 թ. սեպտեմբերին Քուրբիայում կատար-  
ված ռազմական հեղաշրջումը: Կազմակերպությունը շարունակում էր ներգոր-  
ծել ԱՄՆ-ի Կոնգրեսի վրա՝ ամերիկյան օրենսդիրների ուշադրությունը Քուր-  
բիայում մարդու իրավունքների ոտնահարման փաստի վրա բեկեկու նպա-  
տակով: Այս ծրագրի շրջանակներում Հայկական Համագումարը համագոր-  
ծակցում էր մի շարք միջազգային իրավապաշտպան կազմակերպությունների՝  
Միջազգային ներում, Հելսինկյան համաձայնագրի հսկողության խմբի, Եվրո-  
պայի անվտանգության և համագործակցության հանձնաժողովի (ԵԱՀՀ), Մար-  
դու միջազգային իրավունքների փաստաբանների հանձնախմբի, մի շարք ե-  
կեղեցիների և իրավապաշտպան այլ կազմակերպությունների հետ՝ նրանց  
մանրամասն վերլուծություններ ու տեղեկություններ մատակարարելով նը-  
շված խնդրի առնչությամբ: Մասնավորապես, այդ համագործակցության ար-  
դյունքում Եվրոպայի անվտանգության և համագործակցության հանձնաժո-  
ղովը (ԵԱՀՀ) հատուկ տեղեկագիր հրատարակեց Քուրբիայում մարդու իրա-  
վունքների դրության մասին<sup>21</sup>, ԵԱՀՀ-ն ստեղծվել է 1976 թ. իբրև ԱՄՆ-ի կա-  
ռավարության հատուկ գործակալություն, որի նպատակն էր հսկել և հետևել  
1975 թ. Հելսինկիում կայացած Եվրոպայի անվտանգության և համագործակ-  
ցության կոնֆերանսի որոշումների կատարմանը: Այս, ինչպես նաև իրավա-  
պաշտպան մյուս կազմակերպությունների գործունեությունը հիմնականում  
հակախորհրդային բնույթ էր կրում և գերազանցապես ուղղված էր մարդու  
իրավունքների խախտման դեպքերի բացահայտմանը համայնավարական ճամ-  
բարի երկրներում: Այդուհանդերձ, Հայկական Համագումարի ղեկավարները  
այլ իմաստ էին տեսնում այդ կազմակերպությունների հետ համագործակ-  
ցության մեջ և մեծ ջանքեր էին գործադրում դրանց ուշադրությունը Քուր-  
բիայում քրիստոնյա փոքրամասնությունների իրավունքների վրա կենտրո-  
նացնելու ուղղությամբ: 1982 թ. ապրիլին ԱՀՀ-ի միջնորդական ջանքերի շը-  
նորհիվ ԱՄՆ-ի ներկայացուցիչների պալատի Մարդու իրավունքների և միջ-  
ազգային կազմակերպությունների ենթահանձնախմբում կազմակերպվեցին  
Քուրբիայում մարդու իրավունքների դրությանը նվիրված հատուկ ունկնդրում-  
ներ: Հայկական Համագումարը խնդրո առարկա հարցի վերաբերյալ մեծա-  
քանակ նյութեր էր տրամադրել ինչպես հատուկ հաղորդագրությամբ հանդես  
եկած ԵԱՀՀ-ի փորձագետներին, այնպես էլ ենթահանձնախմբի անդամնե-

<sup>20</sup> Տե՛ս «The Armenian Reporter», 1979, March 22.

<sup>21</sup> Տե՛ս նույն տեղը, 1982 October 28:

րին<sup>22</sup>, Թուրքիայի հայ համայնքի իրավունքների պաշտպանության խնդիրը ԱՀՀ-ի գործունեության հիմնական ուղղություններից մեկն էր նաև հետագա տարիներին:

Հայկական Համագումարը հատկապես նկատելի գործունեություն ծավալեց ԱՄՆ-ի Կոնգրեսում Հայոց ցեղասպանության ճանաչման բանաձևերի քրննարկման առնչությամբ:

1974 թ. սկզբին կոնգրեսմեն է. Կոչը ԱՄՆ-ի 93-րդ գումարման Կոնգրեսում ներկայացրեց Նյու Յորքի մի խումբ հայերի բողոքագիրը, որը Կոնգրեսից պահանջում էր ապրիլի 24-ը հայտարարել «Մարդու կողմից մարդու նկատմամբ անմարդկային վերաբերմունքի հիշատակման ազգային օր»<sup>23</sup>: Նույն թ. հունիսի 6-ին կոնգրեսմեն Հ. Հելստոսկին ԱՄՆ-ի Կոնգրեսի քննարկմանը ներկայացրեց հ. 1048 օրինագիծը, որը յուրաքանչյուր տարվա ապրիլի 24-ը հայտարարում էր «Մարդու կողմից մարդու նկատմամբ անմարդկային վերաբերմունքի հիշատակման ազգային օր»<sup>24</sup>: Սակայն, 1974 թ. նշված օրինագիծը Կոնգրեսում այդպես էլ քվեարկության չդրվեց:

1975 թ. հունվարի 23-ին ներկայացուցիչների պալատի դեմոկրատական մեծամասնության ղեկավար Թ. Օ' Նիլը և կոնգրեսմեն Հ. Հելստոսկին ԱՄՆ-ի 94-րդ գումարման Կոնգրես մտցրին հ. 148 բանաձևը, որը, ի տարբերություն նախորդ՝ 1048 բանաձևի, «Հիշատակման օր» էր հայտարարում ոչ թե յուրաքանչյուր տարվա, այլ միայն 1975 թ. ապրիլի 24-ը<sup>25</sup>: Հայկական Համագումարի ներկայացուցիչները ակտիվ արշավ կազմակերպեցին բանաձևի քրննարկումների առնչությամբ: Օրենսդիրների հետ հանդիպումներում նրանք կոչ էին անում սատար կանգնել հ. 148 բանաձևին և մեծաքանակ նյութեր էին տրամադրում 1915 թ. Հայոց ցեղասպանության վերաբերյալ<sup>26</sup>, Ի վերջո, ԱՀՀ-ի գործադրած ջանքերի շնորհիվ 1975 թ. ապրիլի 8-ին ԱՄՆ-ի ներկայացուցիչների պալատը ձայների ճնշող մեծամասնությամբ (332 կողմ, 55 դեմ) ընդունեց հ. 148 բանաձևը: Պետական ղեկարտամենտի ճնշման տակ բանաձևի տեքստից հանվել էր այն հատվածը, որտեղ նշվում էր, որ 1915 թ. հայերի ցեղասպանությունը իրագործվել է Թուրքիայում<sup>27</sup>: Որպեսզի նշված բանաձևը գործող օրենք դառնար, այն պետք է հաստատվեր Սենատի և նախագահի կողմից: Սակայն Սենատի Իրավաբանական հանձնաժողովը պետդեպարտամենտի հուժկու ճնշման տակ մերժեց բանաձևը: Անշուշտ այդ մերժումն ուներ իր պատճառները: Բանն այն է, որ բանաձևի ընդունումը կարող էր ավելի վնասել Թուրք-ամերիկյան հարաբերություններին, որոնք առանց այդ էլ բավականին բարդացել էին ԱՄՆ-ի կողմից Թուրքիային տրամադրվելիք զենքի մատակարարման վրա դրված արգելքի<sup>28</sup> հետևանքով: Պետական ղեկարտամենտի պաշտոնյաներից մեկն այս առիթով հայտարարել էր. «Մենք կը զգանք հայկական ծագումով մեր քաղաքացիներուն զգացումին խորութիւնը, բայց այս «ղեկքը» պատահած էր վաթսուն տարիներ առաջ, եւ հիմա զայն կրկին արժարծելը պիտի վնասէր Թուրքիոյ հետ մեր յարաբերութիւններուն, որ արդէն սկսած է մտածել թէ արդեօ՞ք հրահանգելու է, որ ԱՄՆ լքէ Թուրքիոյ իր

<sup>22</sup> Տե՛ս «Armenian Assembly of America, Aims and Accomplishments», էջ 9:

<sup>23</sup> «The Armenian Reporter», 1974, May 2.

<sup>24</sup> Նույն տեղում, June 27:

<sup>25</sup> Տե՛ս «The Armenian Reporter», 1975, February 6:

<sup>26</sup> Տե՛ս նույն տեղը, March 13:

<sup>27</sup> Տե՛ս նույն տեղը, April 10:

<sup>28</sup> Տե՛ս «The Armenian Weekly», 1974, December 19:



«ուղղախարհիստերը»<sup>29</sup>։ Այսպիսով, ԱՄՆ-ի վարչակազմի նման դիրքորոշումը թելադրվում էր ՆԱՏՕ-ի գծով իր դաշնակից Թուրքիայի հետ հարաբերությունները շփշաջնելու ԱՄՆ-ի պետական շահով։

«Հիշատակման» բանաձևի մերժումից հետո էլ ԱՀՀ-ն շարունակում էր Հայոց ցեղասպանության հարցն արժարժել ԱՄՆ-ի Կոնգրեսում։ Կազմակերպությունը հատկապես նկատելի գործունեություն ծավալեց ամերիկյան կոնգրեսմենների կողմից հ. 192, հ. 247 և հ. 241 բանաձևերի քննարկման առիթով։

1976 թ. մայիսի 11-ին ԱՄՆ-ի ներկայացուցիչների պալատի Միջազգային հարաբերությունների հանձնախմբի Ապագա արտաքին քաղաքականության հարցերի ենթահանձնախմբում տեղի ունեցան հատուկ ունկնդրումներ, որոնց ընթացքում քննության առնվեցին Հայոց ցեղասպանության հարցը և նրա առնչությունները ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության հետ։ ԱՀՀ-ն գործուն դեր է խաղացել այդ ունկնդրումների կազմակերպման և ամերիկահայ գործիչների ու հայ համայնքի ղեկավարների մասնակցության ապահովման գործում։ Հայկական Համագումարի անունից այդ ունկնդրումներին մասնակցում էին Կալիֆորնիայի համալսարանի հայագիտության ամբիոնի վարիչ, դկտ. Ավետիս Սանջյանը, նույն համալսարանի հայոց պատմության դասախոս, դկտ. Ռիչարդ Հովհաննիսյանը, Բեյրութի համալսարանի միջազգային իրավունքի պրոֆեսոր, դկտ. Շավարշ Թորիկյանը, Նյու Յորքի համալսարանի սոցիոլոգիայի պրոֆեսոր, դկտ. Վահագն Դադրյանը, Միչիգանի համալսարանի Ռուսաստանի պատմության պրոֆեսոր, Հայկական Համագումարի համանախագահ, դկտ. Դենիս Փափազյանը։ Ամերիկայի Հայ Դատի հանձնախումբը ներկայացնում էր Լևոն Սարգսյանը, իսկ Հայկական իրավունքների խորհուրդը՝ Տիգրան Ամսարյանը։

Ռ. Հովհաննիսյանը նիստի մասնակիցներին ներկայացրեց Հայոց ցեղասպանության վերաբերյալ գոյություն ունեցող սկզբնաղբյուրների և հրատարակված աշխատությունների մատենագիտությունը։ Ա. Սանջյանը ներկաներին տվեց այն ամենի ընդհանուր նկարագիրը, ինչ տեղի էր ունեցել 1915 թ. հայերի կոտորածների ընթացքում։ Շ. Թորիկյանը քննության առավ Հայկական հարցի միջազգային-իրավական ասպեկտները։ Դ. Փափազյանի ելույթը վերաբերում էր հայկական կոտորածների նկատմամբ Ամերիկայի արձագանքին և Հայաստանի մանդատի հետ կապված հարցերին։ Վ. Դադրյանի ելույթն առնչվում էր այդ դեպքերի արդյունքում հայ ժողովրդի գիտակցության մեջ արմատացած հոգեբանական ծանր վերքերի վերացման խնդրին։

Տ. Ամսարյանը և Լ. Սարգսյանը իրենց կազմակերպությունների անունից ընդհանուր գծերով ներկայացրեցին Հայկական հարցը և հայ ժողովրդի հիմնական ակնկալությունները։ Մասնավորապես Լ. Սարգսյանը իր ելույթում նըշեց, որ «այսօր հայերը պահանջում են վերագործնել Թուրքերի կողմից բռնազավթված իրենց տարածքները» և քննադատեց պետական դեպարտամենտի դիրքորոշումը Հայկական հարցի նկատմամբ<sup>30</sup>։

Այս ունկնդրումները մեծ նշանակություն ունեին ամերիկահայ ամբողջ համայնքի համար, քանի որ մեկ անգամ ևս հայերը հնարավորություն ունե-

<sup>29</sup> Զ. Մարյան, ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը և Հայկական հարցը (1900—1976), Բեյրութ, 1973, էջ 100։

<sup>30</sup> «Investigation Into Certain Past Instances of Genocide and Exploration of Policy Options for the Future. Hearings before the Subcommittee on Future Foreign Policy Research and Development of the Committee on International Relations House of Representatives. 94th Congress. Second Session, May 11; August 30, 1976», Washington, 1976, page 31—32.

ցան ոչ միայն հասարակական ուշադրությունը բեռնել Հայկական հարցի վրա, այլև ամերիկյան օրենսդիրներին անձամբ ներկայացնել Հայոց ցեղասպանության խնդիրը և հայ ժողովրդի արդարացի ձգտումները:

Հայկական Համագումարը ակտիվ գործունեություն ծավալեց նաև Ցեղասպանության թանգարանի հիմնադրման առնչությամբ: 1979 թ. հոկտեմբերի 26-ին ԱՄՆ-ի նախագահ Ջիմի Քարտերի հրամանագրով ստեղծվեց Ցեղասպանության հիշատակման խորհուրդ, որը պետք է նախագահին առաջարկություններ ներկայացնեի Ցեղասպանության զոհերի հիշատակման թանգարանի և կրթական ու հետազոտական հիմնադրամի ստեղծման վերաբերյալ: Քանի որ ոչ նախագահի հրամանագրում, ոչ էլ Ցեղասպանության հանձնաժողովի զեկուցման մեջ ոչ մի խոսք չէր ասվում 1915 թ. հայերի ջարդերի մասին, ԱՀՀ-ն լայնածավալ արշավ կազմակերպեց՝ ԱՄՆ-ի իշխանություններից պահանջելով 1915 թ. հայերի ցեղասպանությունը մտցնել Ողջակիզման թանգարանի ծրագրերում: Այսպես, ԱՀՀ-ն Հայ Դատի հանձնախմբի և Հայերի Իրավունքների խորհրդի հետ համատեղ դիմեց նախագահին<sup>31</sup> և նամակների հոսք կազմակերպեց Կոնգրեսի հասցեով՝ պահանջելով Հայոց ցեղասպանությունն ընդգրկել թանգարանի աշխատանքներում<sup>32</sup>: Մեծ թվով կոնգրեսմեններ իրենց աջակցությունը հայտնեցին և խոստացան գործադրել բոլոր ջանքերը՝ Հայոց ցեղասպանությունը Ողջակիզման խորհրդի ծրագրերում ընդգրկելու համար: Արդյունքում Համագումարի գործադիր մարմնի անդամ, ՄԱԿ-ում ԱՄՆ-ի նախկին ներկայացուցիչ Սեթ Մոմջյանը նշանակվեց Ողջակիզման խորհրդի անդամ՝ ամերիկահայ համայնքը ներկայացնելու համար<sup>33</sup>: Իսկ 1981 թ. ապրիլի 30-ին Ողջակիզման խորհուրդը որոշեց 1915 թ. Հայոց ցեղասպանությունն ընդգրկել իր ծրագրերում<sup>34</sup>, Հարկ է նշել, որ ԱՄՆ-ի թուրքական կազմակերպությունները՝ հատկապես թուրք-ամերիկացիների միացյալ կազմակերպությունը, փորձում էին հակազդել հայկական կազմակերպությունների ձեռնարկումներին՝ բողոքելով Ողջակիզման թանգարանում հայկական բաժնի ստեղծման դեմ<sup>35</sup>: Հակահայկական արշավին ակտիվորեն մասնակցում էր նաև Վաշինգտոնի թուրքական դեսպանատունը, որը ամերիկյան իշխանությունների վրա ճնշում գործադրելով՝ նույնպես ձգտում էր խոչընդոտել Ողջակիզման թանգարանում հայկական բաժնի ստեղծմանը: Այդուհանդերձ, Հայկական Համագումարը դարձավ հայ համայնքի այն կազմակերպություններից մեկը, որոնց իրավունք էր վերապահված մասնակցելու Վաշինգտոնում կառուցվող Ցեղասպանության թանգարանի հայկական բաժնի ստեղծման և պրոպագանդան աշխատանքներին<sup>36</sup>: Բացի այդ, ԱՀՀ-ի կատարած 100.000 դոլարի նվիրատվությունը Ողջակիզման խորհրդի կողմից ստացված առաջին խոշոր դրամական ներդրումն էր<sup>37</sup>:

Հայկական Համագումարը գործնական հետաքրքրություն է ցուցաբերել նաև այն հարցերի առնչությամբ, որոնք անմիջականորեն կապված էին Լիբանանի հայության դրության հետ: Քաղաքացիական պատերազմի տարիներին լիբանանահայ համայնքը կրել էր խոշոր մարդկային և նյութական կորուստներ, ավերվել էին Բեյրութի հայկական թաղամասերը, հազարավոր լի-

<sup>31</sup> Տե՛ս «The Armenian Weekly», 1980, April 19:

<sup>32</sup> Տե՛ս նույն տեղը, May, 17:

<sup>33</sup> Տե՛ս «The Armenian Reporter», 1980, July 3:

<sup>34</sup> Տե՛ս նույն տեղը, 1981, May 14:

<sup>35</sup> Տե՛ս «The Armenian Weekly», 1980, May 17:

<sup>36</sup> Ցավոք, Վաշինգտոնում այժմ գործող Ողջակիզման թանգարանում հայկական բաժնի այդպես էլ չստեղծվեց:

<sup>37</sup> Տե՛ս «The Armenian Reporter», 1981, October 29:

բանանահայեր հայտնվել էին բաց երկնքի տակ՝ շունենալով գոյության որևէ միջոց: Կազմակերպության անդամները ԱՄՆ-ի օրենսդիրներին և վարչակազմի վրա ճնշում էին գործադրում՝ նրանց ուշադրությունը լիբանանահայության դրության վրա բեռեկու և իրական նյութական օգնություն ապահովելու նպատակով: Այդպիսի հանդիպումներ և շփումներ տեղի ունեցան մասնավորապես 1977 թ., երբ հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդի նախագահ Ստիվեն Մուգարը և Տնօրենների խորհրդի համանախագահ Դենիս Փափազյանը այցելեցին մի խումբ ազդեցիկ կոնգրեսմենների և սենատորների: Այդ հանդիպումներում ընդգծվում էր, որ «Լիբանանի վերականգնումն ու վերակառուցումը կարևոր է ԱՄՆ-ի շահերի համար»<sup>38</sup>: 1978 թ. ամերիկահայ համայնքի 58 ներկայացուցիչներ հանդիպեցին ՄԱԿ-ում ԱՄՆ-ի դեսպաններ է. Յանգի և Ֆ. Լեոնարդի հետ և «հայտնեցին իրենց մտահոգությունը Լիբանանի հայ համայնքի անվտանգությունը ապահովելու վերաբերյալ»<sup>39</sup>: Այդ այցելության արդյունքը եղավ այն, որ Միացյալ Նահանգները պաշտոնապես պահանջեցին «ապահովել հայերի անվտանգությունը Լիբանանում»<sup>40</sup>:

Հայկական Համագումարի գործադրած ջանքերի շնորհիվ 1978 թ. ԱՄՆ-ի պետական դեսպարտամենտի միջազգային զարգացման գործակալությունը (US AID) 500.000 դոլարի նպաստ տրամադրեց Լիբանանի օգնության միացյալ կոմիտեին՝ Բեյրութի Պուրճ-Համուդ, Խալիլ-Բեդլիդ և Հաջն հայկական թաղամասերի վերականգնման համար<sup>41</sup>: Նպաստը տրամադրվում էր 1976 թ. ԱՄՆ-ի Սենատի կողմից ընդունված հ. 2941 բանաձևի հիման վրա, որով նախատեսվում էր «մարդասիրական օգնություն հատկացնել Լիբանանի ժողովրդին»<sup>42</sup>: ԱՀՀ-ն ակտիվ մասնակցություն է ունեցել լիբանանահայ համայնքի համար նախատեսված ֆինանսական հատկացումների մասնաբաժինը ապահովելու գործում<sup>43</sup>:

Լիբանանի օգնության միացյալ կոմիտեի կազմի մեջ էին մտնում հայկական երեք բարեգործական կազմակերպությունների՝ Հայ Բարեգործական Ընդհանուր Միության, Հայ Օգնության Միության և Ամերիկայի Հայ Միսիոներական Ընկերության ներկայացուցիչները: Նպաստը տնօրինելու էր ինը հոգուց բաղկացած Ամերիկյան վերահսկիչ խորհուրդը, որի կազմում ընդգրկված էին ամերիկահայ համայնքի երեկի գործիչները: Համագումարի ներկայացուցիչները նույնպես ընդգրկված էին ծրագրի անձնակազմում և պետք է կոորդինացնեին նշված հայկական կազմակերպությունների աշխատանքները<sup>44</sup>: 1980 թ. Հայկական Համագումարը ևս 500.000 դոլարի նպաստ ապահովեց լիբանանահայությանը՝ կրկին ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալության խողովակով<sup>45</sup>: 1980-ական թվականների սկզբներին կազմակերպությունը շարունակում էր նպաստների ապահովման աշխատանքները, և լիբանանահայությանը հատկացված նպաստների ընդհանուր գումարը կազմեց 1.175.000 դոլար<sup>46</sup>:

Ամփոփելով Հայկական Համագումարի «կառավարական ծրագրի» շրջանակներում 1972—1982 թթ. իրականացված գործունեությունը՝ կարելի է եզ-

<sup>38</sup> «Asbarez», Weekly, 1977, June 2.

<sup>39</sup> Armenian Assembly of America. Aims and Accomplishments», page 10.

<sup>40</sup> Նույն տեղում:

<sup>41</sup> Տե՛ս «The Armenian Reporter», 1978, March 16:

<sup>42</sup> Տե՛ս «The Armenian Observer», 1976, February 18:

<sup>43</sup> Տե՛ս «The Armenian Reporter», 1976, February 12:

<sup>44</sup> Տե՛ս «The Armenian Reporter», 1978, April 6.

<sup>45</sup> Տե՛ս «The Armenian Weekly», 1980, September 27:.

<sup>46</sup> Տե՛ս «Armenian Assembly of America. Aims and Accomplishments», էջ 14:

րակացնել, որ այս կազմակերպությունը, փաստորեն, ԱՄՆ-ի հայկական էթնիկական փոքրամասնության լոբբիստական ներգործության յուրահատուկ խումբ է: Արդեն այդ տարիներին հայ համայնքի քաղաքական, հասարակական և մշակութային բոլոր կազմակերպություններից հենց ԱՀՀ-ի գործունեությունն էր ուղղված ԱՄՆ-ի իշխանության վերին մարմինների հետ հարաբերությունների իրականացմանը: ԱՄՆ-ի պետական իշխանության մարմինները մեծ հետաքրքրություն էին ցուցաբերում Հայկական Համագումարի նկատմամբ, քանի որ վերջինս ձգտում էր կապող օղակ դառնալ հայ համայնքի և ԱՄՆ-ի կառավարող շրջանակների միջև: Ուստի պատահական չէ, որ Համագումարի ղեկավարները բազմիցս հայ համայնքը ներկայացրել են պաշտոնական տարբեր ծիսակատարությունների, արարողությունների, հանդիպումների և խորհրդակցությունների ժամանակ: Նրանք հատկապես հաճախ էին հրավիրվում արտաքին քաղաքականության խնդիրներին նվիրված հանդիպում-ասուլիսներին, որոնց մասնակցում էին ԱՄՆ-ի վարչակազմի բարձրաստիճան պաշտոնյաները և էթնիկական մյուս խմբերի ներկայացուցիչները: Այդպիսի շփումների նպատակը «ԱՄՆ-ի արտաքին քաղաքական խնդիրների լուսաբանումն ու պարզաբանումն էր էթնիկական համայնքների ղեկավարներին, և նրանց տեսակետները նկատի առնելը»<sup>47</sup>:

Իր հերթին կազմակերպությունը վայելում է ամերիկյան կառավարության աճող վստահությունը: Դրա լավագույն վկայությունն է այն փաստը, որ հենց ԱՀՀ-ն է ստացել և բաշխել լիբանանահայությունից համար նախատեսված դաշնակցային ֆինանսական հատկացումները:

Իհարկե Համագումարի ոչ բոլոր ձեռնարկումներն են հաջողությամբ պրասակվել: Ինչպես տեսանք, հատկապես մեծ դժվարություններ կային կապված ԱՄՆ-ի իշխանությունների կողմից 1915 թ. Հայոց ցեղասպանության փաստի ճանաչման հետ: Հենց այս հարցում է, որ ԱՀՀ-ն հանդիպեց ամերիկյան իշխանությունների սաստիկ ընդդիմությանը. չնայած Համագումարի և ամերիկահայ մյուս կազմակերպությունների գործադրած ճիգերին, Միացյալ Նահանգների թե օրենսդիր և թե դործադիր իշխանությունները շարունակ մերժում և խուսափում էին Հայոց ցեղասպանության փաստը ճանաչելուց: Անշուշտ, այդ մերժումների հիմնական պատճառը Մերձավոր Արևելքում իր ուզմավարական դաշնակից Թուրքիայի հետ հարաբերությունները չվնասելու ԱՄՆ-ի պետական շահն էր: Որքան էլ մեծ ու նշանակալից լինի այս կամ այն էթնիկական լոբբիի ներգործությունը տվյալ պետության քաղաքական ուղղության վրա, այնուամենայնիվ, երբեք և ոչ մի պարագայում այդ լոբբին չի կարող ինքնուրույնաբար մշակել կամ կանխորոշել այդ ուղղությունը: Այն կարող է հաջողության հասնել այն դեպքում միայն, երբ էթնիկական խմբավորման հետապնդած նպատակները համընկնում կամ առնվազն չեն հակասում տվյալ պետության ուղղավարական շահերին: Ուստի, ամեն անգամ հրեական և հայկական լոբբիների միջև զուգահեռներ անցկացնելիս, անհրաժեշտ է հաշվի առնել, որ սիոնիստական կազմակերպությունների ակնհայտ ձեռքբերումները նախևառաջ պայմանավորված են ԱՄՆ-ի և Իսրայելի շահերի ընդհանրությամբ: Ժամանակակից փուլում, ցավոք, այդպիսի ընդհանրություն չի նկատվում հայ ժողովրդի և ԱՄՆ-ի շահերի միջև:

Այդուհանդերձ, դա ամենևին էլ չի նվազեցնում կամ նսեմացնում այն հսկայական ազդեցություն դերը, որը Հայկական Համագումարը կատարել և շարունակում է կատարել ամերիկահայության շահերի պաշտպանության, այլազան հայանպաստ ծրագրերի իրականացման գործում: ԱՀՀ-ն նպաստել և այժմ

<sup>47</sup> «Asbarez», Weekly, 1977, June 7.

էլ շարունակում է նպաստել ամերիկյան հասարակության մեջ հայ համայնքի ինտեգրացման գործընթացին: Տասնամյակների ընթացքում բազմաթիվ ամերիկահայեր ծանրակշիռ դիրքեր են գրավել ամերիկյան հասարակական կյանքի տարրեր բնագավառներում՝ դաշնակցային և նահանգային խորհրդարաններում ու կառավարություններում, պետական և դիվանագիտական ծառայության մեջ, արտադրության և ձեռներեցության ոլորտներում, առողջապահության, գիտության, գրականության, արվեստի և այլ ասպարեզներում: Ինքնին այն փաստը, որ կազմակերպության ազդեցությունը ամերիկյան հասարակական կյանքի տարրեր ասպարեզներում անհամաշարհորեն ավելի մեծ է հայ համայնքի թվակազմի համեմատ, արդարև կարելի է համարել Հայկական Համագումարի ամենազիխավոր ձեռքբերումներից մեկը:

**К. Р. НАГАПЕТЯН**—«Правительственная программа» Армянской ассамблеи Америки (1972—1982 гг.)—Созданию в 1972 году Армянской ассамблеи Америки способствовали такие факторы, как существенное расширение возможностей использования политического потенциала армянской общиной США, а также рост национального самосознания и тесно связанная с ним тенденция этнической консолидации.

Организация финансирует ряд программ, среди которых основное место занимает «правительственная программа». Она имеет целью способствовать участию армян в управленческих процессах на местном и федеральном уровне, а также защищать интересы армян в высших органах законодательной и исполнительной власти США. Лидеры организации проявляли живейшую заинтересованность при обсуждении в конгрессе вопросов, связанных с нарушением прав армян в Турции, с программами помощи армянам Ливана, предпринимали активные действия, направленные на официальное признание Америкой 24 апреля днем памяти жертв Геноцида армян.